

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Մերիա	[3] Համար
22	Հուլիս	2019 թ.		Բ	2734028534
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
22	Հուլիս	2019 թ.		Մերիա	Համար
			Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ		
Պայմանագիր			[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար	
			22 Հուլիս, 2019 թ.	Բ2734028534	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)					
ԳՐԱՎՈՐ ԵՎ ԲԱՆԱՎՈՐ ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ					
[7.1] ՀՂՄ կտրոնի համար					

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի								
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	0	1	2	4	1	0	5
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[10] Անվանումը	«ՖԻՆԼՈՈՒ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)							
[11] Բանկային տվյալները	ԱՐԴԵՐՆԲԱՆԿ ՓԲԸ				N 2474602078940000			
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ							
[13] Լրացուցիչ տվյալներ								

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն				N 900011000834			
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՍՍՄԻԿՈՆՅԱՆ Փ. 46/5							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն		Համար					
	Լիազորագիր		Ամսաթիվ					

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
№ Ո/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափ միավորը	Ընդհանուր ծավալը կամ ծառայության ընթացը	Միավորի գներ	Զեղչ(%)	Մրժեքը
1	2	3	4	5	6	7
1	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 09128116	ժամ	4.5	5000		22500
2	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 18109516	րուպե	2975	83.33		247906.75
3	իրավաբանական բանավոր թարգմանություն հայ.-ռուս.-հայ.Ձ.Մ.Չայայաբանի հաղորդման առթիվ նախ նյութով	ժամ	5	5000		25000
4	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 09125416	ժամ	25	5000		125000
5	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-գերմաներեն-հայերեն քր. գործ թիվ 63204416	ժամ	3.5	7000		24500
6	իրավաբանական գրավոր թարգմանություն հայերենից գերմաներեն քր. գործ թիվ 19207492	կի2	64372	2.5		160930
7	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 12145216	ժամ	2	5000		10000
8	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերենից եգիպտերեն քր. գործ թիվ 27106705/1	ժամ	47.5	7500		356250
9	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 27106705/1	րուպե	5300	83.33		441649

10	իրավաբանական գրավոր թարգմանություն հայերենից ռուսերեն քր. գործ թիվ 27106705/1	նիշ	483388	1.39		671909,32
11	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 17180716	ժամ	14	5000		70000
12	իրավաբանական բանավոր թարգմանություն հայերեն-ռուսերեն-հայերեն քր. գործ թիվ 14814416	ժամ	2.5	5000		12500
13	իրավաբանական գրավոր թարգմանություն հայերենից գերմաներեն քր. գործ թիվ 62207310	նիշ	132325	2.5		330812.5
14	իրավաբանական գրավոր թարգմանություն հայերենից ուկրաիներեն քր. գործ թիվ 90407702	նիշ	1867	1.67		3117.89
Շուրջաներ						2502075.46

Մտադրություն
մատուցող
(աշխատանք
կատարող)

SHAHINYAN VARDUHI 7803710425

(ստորագրություն, անուն, ազգանուն)

22/07/2019 10:59:00



Մտադրություն
(աշխատանք)
ստացող



(ստորագրություն, անուն, ազգանուն)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

/Թարգմանիչ ներգրավելու մասին/

« 17 » հոկտեմբերի 2016թ.

ք. Գյումրի

«Ճ քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ավագ քննիչ, արդարադատության ավագ լեյտենանտ Շ.Վ.Իկիլիկյանս, քննարկելով թիվ 18109516 քրեական գործի կյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

16.10.2016թ. ժամը 19:05-ին Գյումրի վարչարարի շրջանային վարչության կայանից ստացվել է Երևանի քրեական կոմիտեի կողմից 17.10.2016թ. ժամը 19:05-ին Գյումրի վարչարարի 8-րդ պետ. բաժնում 2-րդ զեմի 8-րդ բեռնարկից Գյումրի Արևածպրահայի ՏՊ «Տաշատ» կազմակերպության կողմից 17.10.2016թ. ժամը 19:05-ին Գյումրի վարչարարի 8-րդ պետ. բաժնում 2-րդ զեմի 30 բեռնարկի բեռնի արգելումը շարունակելու մասին:

Դեպքի առթիվ 2016 թվականի հոկտեմբերի 16-ին «Ճ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 18109516 քրեական գործը, կատարվում է նախաքննություն: Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտ է հարցաքննել ազգությամբ թաթար Արդին Նուրիդինի Խաբիրովին, նրա մասնակցությամբ կատարել քննչական գործողություններ, սակայն վերջինս ունի ռուսերեն կրթություն, չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, այլ տիրապետում է ռուսերեն բանավոր և գրավոր լեզվին, իսկ դատավարության լեզուն հայերենն է, ռուսի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Ճ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

- 1. Սույն քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Ֆինլոու» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Երանուհի Ամատունու Բահարյանին/ ունի լիազորագիր, տիրապետում է հայերեն, ռուսերեն գրավոր և բանավոր լեզուներին, կարողանում է կատարել թարգմանություններ գրավոր և բանավոր՝ հայերենից ռուսերեն և ռուսերենից հայերեն լեզուներով:
2. Երանուհի Ամատունի Բահարյանին բացատրել «Ճ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանիչի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել անհայտ կեղծ թարգմանություն կատարելու համար «Ճ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝ *Շ.Վ.Իկիլիկյան* Շ.Վ.Իկիլիկյան

Ծանոթացա որոշմանը՝ *Պոլյա Ա. Քառասյան*

« 17 » հոկտեմբերի 2016թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
թարգմանիչ հրավիրելու մասին

« 18 » հոկտեմբերի 2016թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ, արդարադատության լեյտենանտ Մ.Գուրոլյանս, վերանայելով Զրանգինա Սուրենի Չալաբյանի հաղորդման առթիվ նախապատրաստված նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

09.10.2016թ.՝ ժամը 21:00-ին, ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնում հաղորդում է տվել Զրանգինա Սուրենի Չալաբյանն այն մասին, որ նույն օրը՝ ժամը 19:00-ի սահմաններում, Երևան քաղաքի Նոր Նորքի 7-րդ զանգվածի Ավետիսյան փողոցի 28/5 հասցեում գործող մթերային խանութում իր և ամուսնու՝ Լեոնիդ Վլադիմիրի Մազմանյանի միջև ծագած վիճաբանության ժամանակ Լ.Մազմանյանը բռունցքներով հարվածներ է հասցրել իր դեմքին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության Նոր Նորքի բաժնում նախապատրաստված նյութերը 17.10.2016թ. ստացվել են ՀՀ ՔԿ Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ հաղորդում տված Զրանգինա Սուրենի Չալաբյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին և տիրապետում է հայերեն բանավոր խոսքին, ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին (խոսքին):

Նկատի ունենալով, որ Զրանգինա Սուրենի Չալաբյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, իսկ «Ֆինլոու» ՍՊԸ-ի թարգմանիչ Լիլիթ Սամվելի Խաչատրյանն ազատորեն տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին, ունի բարձրագույն կրթություն, շահագրգռված չի գործի ելքով, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Զրանգինա Սուրենի Չալաբյանի հաղորդման առթիվ նախապատրաստված նյութերով «Ֆինլոու» ՍՊԸ-ի թարգմանիչ Լիլիթ Սամվելի Խաչատրյանն ճանաչել թարգմանիչ՝ նրան պարզաբանելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները և նախազուգահեռել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

**Վարչական շրջանների ՔԲ քննիչ,
արդարադատության լեյտենանտ**

Մ.Գուրոլյան

Ծանոթացա որոշմանը, ինձ պարզաբանվել են
իմ իրավունքներն ու պարտականությունները:

Թարգմանիչ

Լ.Խաչատրյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԱՐԳԱՆԻՉ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան

« 21 ». հոկտեմբերի 2016թ.

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Հ.Ք.Հայրապետյանս, վերանայելով թիվ 09125416 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2016 թվականի սեպտեմբերի 19-ին ոստիկանության Արարատի մարզային վարչության Մասիսի բաժնում Հովհաննես Ռազմիկի Թուսինյանը հաղորդում և բացատրություն է տվել այն մասին, որ 2016թ. սեպտեմբերի 8-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում Յուլակ Հովհաննեսի Ղարսյանը, ոմն Վարուժը և նրանց երեք ընկերները Երևան քաղաքի Բաբայան փողոցի թիվ 2 հասցեի դիմաց գտնվող ավտոկայանատեղիում ծեծի են ենթարկել իրեն, որից հետո իր կամքին հակառակ բռնի ուժով նստեցրել են «Նիսսան» մակնիշի 50**050 պետհամարանիշի ավտոմեքենան, տարել Երևան քաղաքում գտնվող ամալի տարածք, ավտոմեքենայի մեջ կրկին ծեծի են ենթարկել իրեն, այնուհետև, սև կտորից պարկը գլխին հագցնելով՝ տեղափոխել են Երևան քաղաքի Հարավ-Արևմտյան թաղամասում գտնվող ինչ-որ շինություն, կապել ձեռքերը և ոտքերը, որից հետո ձեռքերով, ոտքերով և մետաղյա ձողով բազմաթիվ հարվածներ են հասցրել մարմնի տարբեր մասերին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Դեպքի առթիվ 20.09.2016թ. ՀՀ ՔԿ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 131-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով հարուցվել է թիվ 09125416 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում Հովհաննես Թուսինյանը ճանաչվել է տուժող, տվել ըստ էության ցուցմունքներ՝ պնդելով հաղորդմամբ հայտնած տեղեկությունները:

Նախաքննության ընթացքում կատարված քննչական և այլ դատավարական գործողություններով պարզվել է, որ հիշյալ դեպքին մասնակից է եղել Վարուժան Հարությունի Կաջոյանը, ով 19.10.2016թ. ներկայացել է ՀՀ ՔԿ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժին:

Նույն օրը Վարուժան Կաջոյանը ներգրավվել է որպես կասկածյալ:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ կասկածյալ Վարուժան Կաջոյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, չնայած ազգությամբ հայ է, վարժ տիրապետում է հայերեն բանավոր լեզվին, ունի ռուսերեն լեզվի կրթություն և տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին, ուստի գործով անհրաժեշտ է հրավիրել թարգմանիչ, ով կարող է թարգմանել հայերեն գրավոր լեզվից հայերեն բանավոր և ռուսերեն գրավոր, բանավոր լեզուներին և ընդհակառակը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 09125416 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել Գագիկ Ավետիքի Շիրնազանյանին /ծնված՝ 02.05.1954թ., հայ, ՀՀ քաղաքացի, բարձրագույն կրթությամբ, աշխատում է «Ֆինլոու» ՍՊ ընկերությունում որպես ռուսերեն լեզվի թարգմանիչ, հաշվառված է ք.Ստեփանավան, Ս.Պապյանի 4 տանը, փաստացի բնակվում է՝ ք.Երևան, Ա.Հովհաննիսյան փողոցի 22 շենքի 12 բնակարանում, անձնագիր AM 0552160/, ով տիրապետում է հայերեն, ռուսերեն գրավոր և բանավոր լեզուներին, կարողանում է կատարել թարգմանություն հայերեն գրավոր, բանավոր լեզվից ռուսերեն գրավոր, բանավոր լեզուներին և ընդհակառակը:

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգման ճանաչելու մասին

«21» հոկտեմբերի 2016թ.

ք. Երևան

Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Շ.Գրիգորյանս, վերանայելով վարույթումս գտնվող թիվ 63204416 քրեական գործի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Կարեն Վարուսի Խաչատրյանը ՀՀ ոստիկանության ԵՔՎ Կենտրոնականի բաժնում 01.06.2016թ. հաղորդում է տվել այն մասին, որ իր հարևան Հայկը շքամուտքից գողացել է իր բնակարանի հին դուռը, բացի այդ, մի քանի անգամ հարվածել է իրեն և տվել սեռական բնույթի հայտյանքներ:

Նշված հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով վարույթն իրականացնող մարմինը, հաստատված համարելով, որ Հայկ Ազատյանի գործողություններում բացակայում են ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ և 177-րդ հոդվածներով նախատեսված հանցագործության հանցակազմերը, 10.06.2016թ. որոշում է կայացրել քրեական գործի հարուցումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով մերժելու մասին:

04.07.2016թ. Երևան քաղաքի դատախազի պաշտոնակատար, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Գ.Ս.Բաղդասարյանը, ուսումնասիրելով վերոնշված նյութերը, որոշում է կայացրել 2016թ. հունիսի 10-ի որոշումը վերացնելու և ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով թիվ 63204416 քրեական գործը հարուցելու մասին ու նախաքննություն կատարելու համար ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի:

Նկատի ունենալով, որ ՀՀ-ում քրեական դատավարությունը տարվում է հայերեն, իսկ վկա Իզգի Էդիպը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, ուստի նրա հետ քննչական գործողություններ կատարելու համար անհրաժեշտ է ներգրավել թարգմանիչ և որպես թարգմանիչ ճանաչել «Ֆինլոու» ՍՊԸ-ի գերմաներեն լեզվի թարգմանիչ Տիգրան Արմենի Գրիգորյանին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15 և 83 հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարույթումս գտնվող թիվ 63204416 քրեական գործով թարգմանիչ ճանաչել «Ֆինլոու» ՍՊԸ-ի գերմաներեն լեզվի թարգմանիչ Տիգրան Արմենի Գրիգորյանին:
2. Տիգրան Արմենի Գրիգորյանին պարզաբանել ՀՀ քր. դատ. օր-ի 83 հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քր. օր-ի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝



Շ.Գրիգորյան

Որոշմանը ծանոթացա, պարզաբանվել է ՀՀ քր. դատ. օր-ի 83 հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ սուտ թարգմանություն կատարելու համար ՀՀ քր. օր-ի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝

Տ.Գրիգորյան



Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ ներգրավելու մասին

26 հոկտեմբերի 2016թ.

ք.Վանաձոր

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության հատկապես կարևոր գործերով ավագ քննիչ, արդարադատության կապիտան Ա.Ս.Մնացականյանս, վերանայելով վարույթում գտնվող թիվ 19207492 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Բացի այդ, Աբրահամ Դավթյանը 1992 թվականի հունիսի 26-ին՝ ժամը 17-ին Վանաձորի «Ուկրշին» բնակելի ավանի մոտ անհիմն վիճաբանել է ոստիկանության Վանաձորի բաժնի աշխատակից, ոստիկանության լեյտենանատ Կարեն Սերյոժայի Անտոնյանի հետ, որի ընթացքում հրազենի գործադրմամբ դիտավորությամբ կոպիտ կերպով խախտել է հասարակական կարգը, որն արտահայտվել է հասարակության նկատմամբ բացահայտ անհարգալից վերաբերմունքով ու զուգորդվել Կարեն Անտոնյանի նկատմամբ բռնության գործադրմամբ և նրա՝ «Վազ 2106» մակնիշի ավտոմեքենան վնասելով:

Փաստի առթիվ 1992 թվականի հունիսի 26-ին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածի 3-րդ մասով հարուցվել է թիվ 19203292 քրեական գործը:

Նախաքննության ընթացքում որոշումներ են կայացվել Աբրահամ Դավթյանին որպես մեղադրյալ ներգրավելու, խափանման միջոց՝ ստորագրություն չհեռանալու մասին ընտրելու և հետախուզում հայտարարելու մասին:

1992 թվականի օգոստոսի 26-ին որոշում է կայացվել թիվ 19203292 քրեական գործով վարույթը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով կասեցնելու մասին:

1992 թվականի հոկտեմբերի 15-ին Վանաձոր քաղաքի դատախազի տեղակալի կողմից ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 100-րդ հոդվածով հարուցվել է թիվ 19207492 քրեական գործը՝ 1992 թվականի հոկտեմբերի 14-ի լույս 15-ի գիշերը Վանաձորի ծննդատան շենքի մոտ Վանաձոր քաղաքի բնակիչ Արմեն Արշալույսի Մելքոնյանի դիակի հայտնաբերման վերաբերյալ:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Վանաձոր քաղաքի բնակիչ Աբրահամ Սերյոժայի Դավթյանը 1992 թվականի հոկտեմբերի 14-ի լույս 15-ի գիշերը Վանաձոր քաղաքի «Հայրենական մեծ պատերազմի» զոհվածների հուշարձանի մոտ, անձնական անբարյացակամ հարաբերությունների արդյունքում ծագած վիճաբանության ընթացքում հրազենային կրակոցներով և դանակի հարվածներով դիտավորությամբ սպանել է համաքաղաքացի Արմեն Արշալույսի Մելքոնյանին, նրա դիակը տեղափոխել Վանաձորի թիվ 1 հիվանդանոցի տարածք ու դիմել փախուստի:

1992 թվականի հոկտեմբերի 16-ին մեղադրյալ Աբրահամ Դավթյանի նկատմամբ ընտրված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը փոփոխվել է կալանքով:

1993 թվականի հուլիսի 8-ին թիվ 19203292 քրեական գործը միացվել է թիվ 19207492 քրեական գործին և նախաքննությունը շարունակվել թիվ 19207492 համարով:

2004 թվականի օգոստոսի 16-ին որոշում է կայացվել Աբրահամ Դավթյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածի 3-րդ մասով և 258-րդ հոդվածի 4-րդ մասով մեղադրյալ ներգրավման որոշումները ՀՀ գործող քրեական օրենսգրքին համապատասխանացնելու մասին:

2004 թվականի օգոստոսի 16-ին որոշում է կայացվել Աբրահամ Սերյոժայի Դավթյանին ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

2006 թվականի մարտի 27-ին Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի կողմից որոշում է կայացվել մեղադրյալ Աբրահամ Սերյոժայի Դավթյանի նկատմամբ խափանման միջոց կալանավորումն ընտրելու մասին:

2016 թվականի սեպտեմբերի 27-ին Աբրահամ Սերյոժայի Դավթյանը հայտնաբերվել և ձերբակալվել է Գերմանիայի Դաշնության Դորտմունդ քաղաքում:

Սկսած ունենալով, որ Աբրահամ Դավթյանին Գերմանիայի Դաշնությունից Հայաստանի Հանրապետություն հանձնելու համար անհրաժեշտ է գերմաներեն լեզվով թարգմանել թիվ 19207492 քրեական գործի նյութերը, իսկ «Ֆինլու» ՍՊ ընկերության աշխատակցուհի Մարիա Բալայանը ազատ տիրապետում է հայերեն և գերմաներեն լեզուներին, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15, 55 հոդվածի 4-րդ մասի 12-րե կետի և 83 հոդվածի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն նյութերով որպես թարգմանիչ ներգրավել «Ֆինլու» ՍՊ ընկերության աշխատակցուհի Մարիա Հովհաննեսի Բալայանին /ծնվ՝ 27.07.1982թ., հաշվառված՝ ք.Երևան Չարենցի 71/7/:

2. Թարգմանիչ Մարիա Բալայանին ծանոթացնել և պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածով նախատեսված նրանց իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀԿԳ ավագ քննիչ՝

Ա.Մնացականյան

Որոշմանը ծանոթացել եմ, իմ իրավունքներն ու պարտականությունները բացատրվել են, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

«ձե» հոկտեմբերի 2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Թարգմանիչ հրավիրելու մասին

27 հոկտեմբերի 2016թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ, արդարադատության լեյտենանտ Ա.Ա.Խաչատրյանս, վերանայելով վարույթիս թիվ 12145216 քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2016թ. օգոստոսի 29-ին ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնում Ալբերտ Գևորգի Կիրակոսյանը հաղորդում է տվել այն մասին, որ 2016թ. օգոստոսի 27-ին՝ ժամը 14:00-ի սահմաններում, Խաչիկ Հակոբյանը հատել է Երևան քաղաքի Էրեբունի 2-րդ զանգվածի 73/12 հասցեի հողամասի մոտ գտնվող ընկույզի երկու ծառերը՝ իրեն պատճառելով նյութական վնաս:

Համաձայն ՀՀ Բնապահպանության նախարարության աշխատակազմի քննապահականական պետական տնտեսության Երևանի տարածքային բաժնից ստացված գրության՝ 2016թ. օգոստոսի 27-ին նշված ընկույզենիները ապօրինի հատվել են Ա. Կիրակոսյանին պատկանող հողամասից դուրս գտնվող տարածքում, ինչի արդյունքում բուսական աշխարհին պատճառվել է զգալի չափի՝ 225.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում 09.09.2016թ. ՀՀ քր. օր. 296-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 12145216 քրեական գործը:

27.10.2016թ. Տախսիա Միլսախիլի Բերոբյանը ներկայացել է քննության և հայտնել է, որ ցուցմունք տալու համար բավարար կերպով չի տիրապետում հայերենի՝ չի տիրապետում գրավոր հայերեն լեզվին:

«29» հոկտեմբերի 2016թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ Թ.Նալբանդյանս, վերանայելով վարույթում քննվող թիվ 27106705/1 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում քննվող թիվ 27106705/1 քրեական գործով Նոդարի Ժորժի Ասադովը ներգրավվել է որպես մեղադրյալ այն բանի համար, որ նա գողությամբ առանձնապես խոշոր չափերի գումար հափշտակելու նպատակով նախապես հանցավոր համաձայնության գալով Սերյոժա Ֆրիկի Ամարյանի հետ, Արտաշատ քաղաքում տարադրամի առևտրով զբաղվող Հրայր Հենրիկի Հովսեփյանից ԱՄՆ դոլար գնելու պատրվակով, 2005թ. օգոստոսի 20-ին ժամը 11-ի սահմաններում, վերջինիս հրավիրել են իրենց կողմից վարձակալած՝ Արտաշատ քաղաքի Օգոստոսի 23-ի փողոցում գտնվող Մուրադ Հարությունյանի խանութ, որտեղ Նոդարի Ասադովը սպասել է դրսում, իսկ Սերյոժա Ամարյանը Հրայր Հովսեփյանից վերցնելով 4,643,700 դրամին համարժեք 10,000 ԱՄՆ դոլար գումարը՝ այն դրել է պատի մոտ դրված, նախապես հետնամասում անցք բացված պայուսակի մեջ, ապա իբր դրամ բերելու նպատակով անցել է հարևան սենյակ և նախապես իր կողմից պատի վրա բացված միջանցիկ անցքով պայուսակից նշված գումարը գաղտնի հափշտակելով խանութի հետևի մասի դռնից դուրս է եկել և Նոդարի Ասադովի հետ հեռացել են:


ՀՀ-ում քրեական դատավարությունը տարվում է հայերեն լեզվով, սակայն նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել քննչական գործողություններ կատարել Նոդարի Ասադովի հետ, ով չի տիրապետում հայերենին և կարող է հանդես գալ նաև ռուսերեն լեզվով:

Սկստի ունենալով, որ «ՖԻՆԼՈՌ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Օմվինար Խոսրովի Թորոսյանն ազատորեն տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին, չի հանդիսանում քրեական գործով շահագրգռված անձ և կարող է հրավիրվել որպես թարգմանիչ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

2. Թիվ 27106705/1 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել Օմվինար Խոսրովի Թորոսյանին /անձնագիր՝ AK0647345, տրված՝ 01.11.2010թ. 004-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ ք.Երևան, Դեմիրճյան փող. 12շ. բն.24/ և նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված՝ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար քրեական պատասխանատվության մասին:

ՀԿԳ ավագ քննիչ՝



Թ.Նալբանդյան

Ծանոթացա որոշմանը, ինձ բացատրվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված՝ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



Օ.Թորոսյան

«29» 10 2016թ

8/9/10

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
թարգմանիչ հրավիրելու մասին

«29» հոկտեմբերի 2016թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ՀԿԳ ավագ քննիչ Թ.Նալբանդյանս, վերանայելով վարույթում քննվող թիվ 27106705/1 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում քննվող թիվ 27106705/1 քրեական գործով Նոդարի Ժորժի Ասադովը ներգրավվել է որպես մեղադրյալ այն բանի համար, որ նա գողությամբ առանձնապես խոշոր չափերի գումար հափշտակելու նպատակով նախապես հանցավոր համաձայնության գալով Մերյոժա Ֆրիկի Ամարյանի հետ, Արտաշատ քաղաքում տարադրամի առևտրով զբաղվող Հրայր Հենրիկի Հովսեփյանից ԱՄՆ դոլար գնելու պատրվակով, 2005թ. օգոստոսի 20-ին՝ ժամը 11-ի սահմաններում, վերջինիս հրավիրել են իրենց կողմից վարձակալած՝ Արտաշատ քաղաքի Օգոստոսի 23-ի փողոցում գտնվող Մուրադ Հարությունյանի խանութ, որտեղ Նոդարի Ասադովը սպասել է դրսում, իսկ Մերյոժա Ամարյանը Հրայր Հովսեփյանից վերցնելով 4,643,700 դրամին համարժեք 10,000 ԱՄՆ դոլար գումարը՝ այն դրել է պատի մոտ դրված, նախապես հետնամասում անցք բացված պայուսակի մեջ, ապա իբր դրամ բերելու նպատակով անցել է հարևան սենյակ և նախապես իր կողմից պատի վրա բացված միջանցիկ անցքով պայուսակից նշված գումարը գաղտնի հափշտակելով խանութի հետևի մասի դռնից դուրս է եկել և Նոդարի Ասադովի հետ հեռացել են:

ՀՀ-ում քրեական դատավարությունը տարվում է հայերեն լեզվով, սակայն նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել քննչական գործողություններ կատարել Նոդարի Ասադովի հետ, ով չի տիրապետում հայերենին և կարող է հանդես գալ եզդերեն լեզվով:

Նկատի ունենալով, որ «ՖԻՆԼՈՌ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Սաիդ Ջայիլի Ավդալյանն ազատորեն տիրապետում է հայերեն և եզդերեն լեզուներին, չի հանդիսանում քրեական գործով շահագրգռված անձ և կարող է հրավիրվել որպես թարգմանիչ, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 27106705/1 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել Սաիդ Ջայիլի Ավդալյանին /անձնագիր՝ AH0699781, տրված՝ 02.12.2008թ. 046-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ, Կոտայքի մարզ, գյուղ Ջովունի, 1-ին փող. տուն 15/ և նրան պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված՝ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար քրեական պատասխանատվության մասին:

ՀԿԳ ավագ քննիչ՝

Թ.Նալբանդյան



Ծանոթացա որոշմանը, ինձ բացատրվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված՝ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝

Ս.Ավդալյան

«29» հոկտեմբերի 2016թ.



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Քրեական գործով թարգման հրավիրելու մասին

31 հոկտեմբերի 2016թ.

ք.Երևան

«Քննչական կոմիտեի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ Ա.Խաչատրյանս, վերանայելով թիվ 17180716 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2016 թվականի օգոստոսի 21-ին «Նուսրիկանության Նոր Նորքի բաժնում հաղորդում է Կարեն անունով ներկայացած մի անձ 043 39 65 83 բջջային հեռախոսահամարով 07.09.2016թ. զանգահարել է «լիստ.ամ» կայքում տեղադրված իր՝ 077 63 19 77 հեռախոսահամարին և իրեն պատկանող «Այֆոն 6 Գոլդ» տեսակի բջջային հեռախոսը 270.000 «Հրամ գումարով գնելու պատրվակով խնդրել է այն թողնել Երևան քաղաքի Ավան, Բաբաջանյան փողոցում գործող «Ստարայա Մելնիցա» հացատան գանձապահ Նարինե Սաշայի Քարդաշյանի մոտ, այնուհետև մոտենալ Երևան քաղաքի Ավան, Աճառյան փողոցում գործող «Հայկական զարգացման բանկ» ՓԲԸ-ի մասնաճյուղի մոտակայք՝ բջջային հեռախոսի գումարը վերցնելու: Պայմանավորվածության համաձայն՝ գումարը վերցնելու նպատակով գնացել է վերը նշված հասցե, սակայն Կարեն անունով ներկայացած անձն այնտեղ չի եղել, որից հետո վերադառնալով հիշյալ հացատան՝ Ն.Քարդաշյանից տեղեկացել է, որ Կարենի կողմից ուղարկված անձը եկել և վերցրել է իր հիշյալ բջջային հեռախոսն ու հեռացել:

Դեպքի առթիվ 19.09.2016թ. «Նուսրիկանության Նոր Նորքի բաժնում «Քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 17180716 քրեական գործը:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել որպես փուժող հարցաքննել Մարինա Սերգեյի Մակարենկովային և Յուլյա Դյագիլևային, ովքեր չեն տիրապետում հայերեն գրավոր խոսքին /լեզվին/, սակայն ազատորեն տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր խոսքին:


Վերոգրյալի հիման վրա ղեկավարվելով «Քրեական դատավարության 55-րդ հոդվածի և 15-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

- Թիվ 17180716 քրեական գործով որպես թարգման հրավիրել «Ֆինլոու» ՍՊԸ-ի ռուսերեն լեզվի թարգմանիչ՝ Լիլիթ Խաչատրյանին /ազատ

տիրապետում է ռուսերեն և հայերեն լեզուներին, քրեական գործով
չհախազրգոված անձ է/:

- Լիլիթ Խաչատրյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության
օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքներն ու
պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական
օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատրասխանարվության մասին:

Քննիչ  Վ.Ռ. Խաչատրյան

Ինձ պարզաբանվել է որպես թարգմանի իրավունքներն և
պարտականությունները, նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338
հոդվածով նախատեսված պատրասխանարվության մասին:

<<31>> Իսկյան Շրեյթ 2016թ.

բարձրագույն ախրայ Լ. Խաչատրյան է

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
թարգմանիչ ներգրավելու մասին

01.11.2016թ.

ք.Երևան

Արաբկիրի քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության ավագ լեյտենանտ Ս.Ա.Պողոսյանս, քննարկելով վարույթիս թիվ 14814416 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Գոհար Սերգեյի Մանուչակյանը հաղորդում և բացատրություն է տվել այն մասին, որ 2016 թվականի սեպտեմբերի 25-ին՝ ժամը 03:20-ի սահմաններում, Երևան քաղաքի Կոմիտաս փողոցում գտնվող «ՍԱՍ» հանրախանութի մոտ մի հարբած տղամարդ մեկ անգամ ձեռքով և մեկ անգամ ձեռքին եղած ատրճանակով հարվածել է իրեն՝ պատճառելով մարմնական վնասվածք, ինչպես նաև նշված ատրճանակով սպառնացել է իրեն սպանել:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ 2016 թվականի սեպտեմբերի 25-ին՝ ժամը 03:20-ի սահմաններում, Երևան քաղաքի Կոմիտաս 52 հասցեում գտնվող «ՍԱՍ» հանրախանութի մոտ Մինաս Ստյոպայի Տոնոյանը խուլիգանական դրդումներով ալկոհոլի ազդեցության տակ, սեփական անձի կարծեցյալ առավելություններն ընդգծելու մղումով, չնչին պատճառով, այն է՝ Գոհար Սերգեյի Մանուչակյանի իրենից հեռու մնալու հորդորները որպես պատճառ օգտագործելով հնչեցրել է սեռական բնույթի հայիոյանքներ, որի ընթացքում հարվածել է Գոհար Սերգեյի Մանուչակյանի ձեռքին՝ վերջինիս առողջությանը դիտավորությամբ պատճառելով միջին ծանրության վնաս՝ աջ դաստակի նախադաստակային գլխիկավոր ոսկրի երկայնակի ոչ լրիվ կոտրվածքի ձևով:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում 10.10.2016թ. ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով հարուցվել է թիվ 14814416 քրեական գործը և Գոհար Սերգեյի Մանուչակյան ճանաչվել է տուժող:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Դավիթ Օվասապյանը և Արմեն Թորոսյանը չեն տիրապետում հայերեն գրավոր և բանավոր խոսքին, սակայն ազատորեն տիրապետում են ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին:

Նկատի ունենալով այն, որ Դավիթ Օվասապյանը և Արմեն Թորոսյանը պետք է ցուցմունքներ տան, անհրաժեշտություն է առաջացել ներգրավվել ռուսերեն և հայերեն լեզուներին ազատորեն տիրապետող թարգմանիչ, ուստի ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15 և 83 հոդ.հոդ. պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Որպես թարգմանիչ ներգրավել Վարդուհի Ավետիսի Շահինյանին/ AH0512851, հաշվառված ք.Երևան, Բաղրամյան 62 զ. Բն. 48 /, ով հավասարապես տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին:

2. Թարգմանիչ Վարդուհի Ավետիսի Շահինյանին ծանոթացնել ՀՀ քր.դատ.օր. 83 հոդ. նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քր.օր. 338 հոդ. նախատեսված ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար քրեական պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝

Ս. Պողոսյան

Որոշմանը ծանոթացա, իրավունքներս ու պարտականություններս բացատրված են, ՀՀ քր.օր. 338 հոդ. նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ

Թարգմանիչ՝

Վ. Շահինյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
թարգման ճանաչելու մասին

26.10.2016թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ Վ.Վ.Ասատրյանսս վերանայելով վարույթումս քննվող թիվ 62207310 քրեական գործի նյութերը

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

Արմեն Սերգեյի Բաղայանը 2009թ. սեպտեմբերի 8-ին դրդել է <<Սիբմել>> ՍՊԸ-ի տնօրեն Մեդրակ Երևնի Պողոսյանին իրեն իրացնելու նպատակով պատրաստել իր անվամբ <<Սիբմել>> ՍՊԸ-ում աշխատելու և 270.000 ՀՀ դրամ աշխատավարձ ստանալու վերաբերյալ իրավունք վերապահող փաստաթուղթ հանդիսացող կնիժ տնղեկանք, որն այնուհետև օգտագործել է՝ 08.09.2009թ. ներկայացնելով Երևան քաղաքի Թումանյան 17 հասցեում գտնվող <<Ինելկոբանկ>> ՓԲԸ:

Բացի այդ, Ա.Բաղայանն ուրիշի գույքը հափշտակելու դիտավորությամբ, Գրիշա Աբգարյանի և Գառնիկ Ենոքյանի վստահությունը չարաշահելու նդանակով՝ նրանց համար վարել ստանալու պատրվակով, նախնական համաձայնության է եկել <<Կարեն և Հակոբ>> որդիներ ՍՊԸ-ի տնօրեն Էլմիրա Մարգարյանի հետ՝ օգտագործելու նպատակով ակնհայտ կնիժ փաստաթղթեր կազմելու շուրջ, վերջինիս միջոցով Գրիշա Աբգարյանի և Գառնիկ Ենոքյանի անվամբ ձևք է բերել աշխատանքի և աշխատավարձի վերաբերյալ կնիժ տնղեկանքներ, որոնք այնուհետև ներկայացվել են <<Ինելկոբանկ>> ՓԲԸ-ին և դրանց հիման վրա նշված երկու անձանց, իբրև ապառիկ նդանակով կահույք գնելու համար, տրամադրվել են ընդհանուր առմամբ 3.350.000 ՀՀ դրամ գումարի վարկեր: Պայմանավորվածության գալով կահույքի վաճառքով զբաղվող Ա/Ձ Գևորգ Կարապետյանի հետ և կանխիկացնելով վարկերի գումարը, Գրիշա Աբգարյանին և Գառնիկ Ենոքյանին տվել է ընդամենը 1.300.000 ՀՀ դրամ, իսկ մնացած 2.050.000 ՀՀ դրամ գումարը հափշտակել է:

Բացի այդ, Ա.Բաղայանը խարդախությամբ ուրիշի գույքը հափշտակելու դիտավորությամբ, Գառնիկ Ենոքյանի և Գրիշա Աբգարյանի գործարքից մի քանի օր անց, Ա.Բաղայանը Ա/Ձ Գևորգ Կարապետյանին խնդրել է իրեն տալ Գրիշա Աբգարյանի կողմից իբրև թն գնված 2 միլիոն ՀՀ դրամ արժողությամբ կահույքը, գումարը մի քանի օրից վճարելու պայմանով: Գ.Կարապետյանը վստահելով Ա. Բաղայանին՝ նրան է տվել նշված կահույք, սակայն Ա. Բաղայանը չի տվել նշված 2 միլիոն ՀՀ դրամ գումարը և չարաշահելով Գ.Կարապետյանի վստահությունը, խաբեությամբ, հափշտակել է նեղասնյակային կահույքը՝ Գ.Կարապետյանին պատճառելով խոշար չարիերի, ընդհանուր 2 միլիոն ՀՀ դրամի գույքային վնաս:

Բացի այդ, Ա.Բաղայանը կնիժ փաստաթուղթ պատրաստելու և իրացնելու շուրջ նախնական համաձայնության գալով իր ծանոթ Էլմիրա Արյուծիկի Մարգարյանի հետ, վերջինիցս ձևք է բերել իր անվամբ <<Կարեն և որդիներ>> ՍՊԸ-ում աշխատելու վերաբերյալ իրավունք վերապահող փաստաթուղթ հանդիսացող կնիժ տնղեկանք, որն այնուհետև օգտագործել է՝ 15.09.2010թ. ներկայացնելով <<Ինելկոբանկ>> ՓԲԸ և

ստանալով վարկ Ա/Ձ Գևորգ Կարապետյանից գնել է 1.200.000 ՀՀ դրամ արժողությամբ ննջատնայակային կահույք:

Բացի այդ, Ա.Բաղայանը խարդախությամբ ուրիշի գույքը հափշտակելու դիտավորությամբ, Գագիկ Բեգրակյանին պատկանող 9500 ԱՄՆ դոլար արժողությամբ <<Մերսեդես-Բենց>> С 240 մակնիշի ХLХ 674 պնտհամարանիշի ավտոմեքենան իր ծանոթ արհեստավորի մոտ վերանորոգել տալու պատրվակով, 2009թ. դեկտեմբեր ամսին տեղափոխել են քաղաք Էջմիածին՝ ավտոմեքենայի ղեկը աջից ձախ փոխելու համար, սակայն դրանից հետո Ա. Բաղայանը, առանց Գ. Բեգրակյանի գիտության, նշված ավտոմեքենան գործով քննության ընթացքում դեռևս չպարզված ուն Արկատիի միջոցով 4.300 ԱՄՆ դոլարի դիմաց հանձնել է Սաշիկ Կավենյանին՝ որպես նրան ունեցած պարտքի նրաշխիք՝ Գ. Բեգրակյանին պատճառելով առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս:

Բացի այդ, Ա.Բաղայանը խարդախությամբ ուրիշի գույքը հափշտակելու դիտավորությամբ, 2009թ. նոյեմբեր ամսին ծանոթացել է Վլադիմիր Արտուշի Խաչատրյանի հետ, համաձայնության ելել վերջինիս պատկանող, Բալահովիտ գյուղի 2-րդ փողոցի 10 հասցևում գտնվող տունը բանկում գրավ դնելու միջոցով իր անվամբ վարկ ստանալու հարցում, պայմանով, որ վարկի գումարի մի մասը կվերցնի ինքը, մի մասը Վ. Խաչատրյանը, յուրաքանչյուր կփակի վերցրած գումարը, իսկ ինքը նաև վարկի ողջ տոկոսները: Այդ նպատակով 05.11.2009թ. Վ.Խաչատրյանը Էջմիածնի տարածքային նոտարական գրասենյակում Ա.Բաղայանին լիազորագիր է տվել նրա հայեցողությամբ օտարելու, գրավ դնելու սեփականության իրավունքով իրեն պատկանող վերը նշված տունը՝ նրան փոխանցելով նաև տան սեփականության իրավունքի գրանցման վկայականի բնօրինակը:

Ա.Բաղայանը Վ.Խաչատրյանին պատկանող տունը բանկում գրավ դնելու փոխարեն նրա վստահությունը չարաշահելով և խաբեությամբ 25.02.2010թ. 15 միլիոն ՀՀ դրամով վերը նշված տունը վաճառել է Եղիա Սարգսի Դեզնմոնյանին, խարդախությամբ Վ. Խաչատրյանից հափշտակելով առանձնապես խոշոր արժողությամբ վերը նշված տունը՝ Վ. Խաչատրյանին պատճառելով ընդհանուր 15 միլիոն ՀՀ դրամի գույքային վնաս:

Դեպքի առթիվ 2010թ. մարտի 11-ին Կենտրոնականի քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 325 հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 62207310 քրեական գործը:

06.12.2010թ. որոշում է կայացվել թիվ 62207310 քրեական գործի վարույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով կանգնելու մասին:

06.09.2016թ. ՀՀ ռստիկանության Կենտրոնականի բաժնից գրություն է ստացվել այն մասին, որ ՀՀ-ում Բնտերպոլի ԱԿԲ-ից տեղեկատվություն է ստացվել առ այն, որ Ա.Բաղայանը բնակվում է Գերմանիայի Դաշնության Հանրապետությունում:

10.10.2016թ. թիվ 62207310 քրեական գործի վարույթը վերսկսվել է:


17.10.2016թ. Արմեն Սերգեյի Բաղայանին առաջադրված մեղադրանքը փոփոխվել է և նրան նոր մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 38-325 հոդվածի 1-ին մասով, 178 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 178 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, 325 հոդվածի 2-րդ մասով, 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 178 հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Նկատի ունենալով, որ անհրաժեշտ է Ա.Բաղայանի վերաբերյալ կայացված դատավարական որոշումները թարգմանել գերմաներեն լեզվով, ինչի համար անհրաժեշտ է գերմաներեն լեզվի իմացությունը, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15, 55 և 83 հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարույթիս թիվ 62207310 քրեական գործով որպես թարգման ճանաչել <<Ֆինլոու>> ՍՊԸ-ի թարգմանիչ Մարիյա Բալայանին, ով տիրապետում է գերմաներեն և հայերեն գրավոր ու բանավոր լեզուներին
2. Թարգման Ա.Բալայանին պարգաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածով նախատեսված թարգմանիչի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝



Վ.Վ. Ասատրյան

Որոշմանը ծանոթացա, պարգաբանվել է ՀՀ քր. դատ. օր-ի 83 հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ սուտ թարգմանություն կատարելու համար ՀՀ Քր. օր-ի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգման՝



Ա.Բալայան

Ռեկր - հոսք

1257 4/2

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

թարգմանիչ ներգրավելու մասին

18 հոկտեմբերի 2016թ.

ք. Վանաձոր

«ՔԿ ՋՔԳՎ յոթերորդ կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ Տ.Վ.Բաբայանս, վերանայելով թիվ 90407702 քրեական գործի նյութերը՝ ըստ մեղադրանքի Շալիկո Նաչալնիկի Կասիկի՝ «Քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասով.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

«ՊՆ 63853 գործառնաթիվով ժամկետային զինծառայող, շարքային Շալիկո Նաչալնիկի Կասիկը 1992թ-ի դեկտեմբերին զինվորական ծառայությունից վերջնականապես խուսափելու նպատակով ինքնակամ թողել է ծառայությանը վայրը և այլևս գործառնա չի վերադարձել:

Դեպքի առթիվ 10.07.2002թ-ին «Քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի «ա» կետով հարուցվել է քրեական գործ:

27.08.2002թ-ին Շալիկո Նաչալնիկի Կասիկի նկատմամբ որոշում է կայացվել «Քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի «ա» կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին, նրա նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը և վերջինիս հայտնաբերելու նպատակով հայտարարվել է հետախուզում:

Քրեական գործի նախաքննության ընթացքում ձեռնարկված միջոցառումներով հնարավոր չի եղել պարզել մեղադրյալ Շալիկո Նաչալնիկի Կասիկի գտնվելու վայրը, ինչի համար 29.08.2002թ-ին որոշում է կայացվել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին՝ մեղադրյալի քննությունից թաքնվելու հիմքով:

24.08.2005թ-ին որոշում է կայացվել կատարած հանցագործությունը վերավորակելու և «Նոր քրեական օրենսգրքի 362-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանեցնելու մասին:

«ՔԿ ՋՔԳՎ յոթերորդ կայազորային քննչական բաժնում ստացվել է մեղադրյալ Շ.Կասիկի նոտարական կարգով վավերացված ուկրաիներեն լեզվով դիմումը, համաձայն որի՝ վերջինս խնդրել է իր նկատմամբ հարուցված քրեական գործով վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել՝ վաղեմության ժամկետն անցած լինելու հիմքով:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարության լեզուն հայերենն է, իսկ Շալիկո Նաչալնիկի Կասիկի դիմում գրված է ուկրաիներեն լեզվով ուստի անհրաժեշտ է սույն քրեական գործով ներգրավել թարգմանիչ:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով «Քր. դատ. օր-ի 55-րդ, 15-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Որպես թարգմանիչ հրավիրել «Ֆին Լոու» ՍՊԸ թարգմանիչ Լուսինե Մարգարյանին, որը գործով չչափազորգոված անձ է:

2. Թարգմանիչ Լ.Մարգարյանին պարզաբանել նրա իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար «Քր. օր-ի 338 հոդ-ով նախատեսված քրեական պատասխանատվության մասին, որի մասին հայտնել նրան ստորագրությամբ:

«ՔԿ ՋՔԳՎ ՅՈՒԹԵՐՈՐԴ ԿԱՅԱՁՈՐԱՅԻՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՔՆՆԻՉ՝



Տ.Վ.ԲԱԲԱՅԱՆ

Սույն որոշումն ինձ հայտնվել է, ես նախագգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քր. օր-ի 338 հոդ-ով նախատեսված պատասխանատվության մասին: Միաժամանկ ինձ պարզաբանվել են ՀՀ քր. դատ օր-ի 83 հոդվածով սահմանված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները:

Թարգմանիչ՝



Լ.Մարգարյան